

ՎՍԵՄԱՓԱՅԼ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԵԻՈՐ ՏԷՐ

Տ. Տ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԾԻՐԱՆԱԻՈՐ ԱՂԱՃԱՆԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԷ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ

Կ' ԱՅՅԵԼԷ Ս. ՂԱԶԱՐ

(ԱՊՐԻԼ 24-28)

ՕՐՀՆԵԱԼ ԵԿԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ

Ապրիլ 24: Այս երեկոյ բացառիկ ոգեւորութիւն մը, արտասույթ շարժում մը կայ Վենետիկի կայարանին մէջ: Քաղաքին Պատրիարք Ծիրանաւորը՝ Ամենապատիւ Ռոնքալի, իր շուրջ ունենալով փոխանորդ Եպիսկոպոսը՝ Գերպոյ. Ճ. Օլիւթի եւ ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ, կը սպասեն Հռոմէն ժամանող շոգեկառքին: Հասած են արդէն նաեւ քաղաքական, պետական եւ զինուորական բարձրաստիճան անձնակազմներ եւ ներկայացուցիչներ, իրենց յարգանքի տուրքը մատուցանելու Վաթ. Գերերջ. Ծիր. Աղաճանեանի, որ կու գայ իր հայրական սէրն ու շնորհքը սփռելու գեղաճիծաղ Վենետիկի լճակին վրայ:

Հոն են Ուխտիա Գերպոյ. Աբրահայրը՝ Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան, ուրիշ բազմաթիւ վարդապետներ. կարգ կարգ շարուած են Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի աշակերտները. շատ ազգայիններ ալ փութացած են աւելի եւս ոգեւորելու այս բացառիկ ընդունելութիւնը:

Արդէն իսկ իջած է Գերերջ. Հոգեւոր Տէրը, ձեւացած է հանդիսաւոր թափօրը, որ կը յառաջանայ ծափող յոյներու մէջ: Յուզիչ է մանաւանդ երկու Ծիրանաւոր Հոգեւոր Պետերու ողջագոյնումը, խորհրդանշիչ Արեւելքի եւ Արեւմուտքի անբաժան միութեան: Արեւելքի Հովուապետ

մը, հիւրընկալ Վենետիկի ափերուն վըրայ... ու այդ տեսարանը կը տանի մեզ դէպի հին դարերը քրիստոնէութեան, երբ, ըստ նուիրական աւանդութեան մը, մեր հաւատքի Լուսաւորիչը Արեւմուտք կու գար անսահման ոգեւորութեան մէջ:

Վերջալոյսի հազարգունեան ցոլքերուն մէջէն շոգեմալոյ կը սուրայ հիմա դէպի Ս. Ղազար: Հեռուէն կը լսուին զըւարթ ղոլանջները Հայոց կղզիին. քարափին հաւաքուած են բոլոր վարդապետները եւ աշակերտները, որոնք կը փութան որդիական խանդավառ զգացումներով համբուրել Ս. Աջը Գերերջ. Հովուապետին, որ արդէն սարկաւազներով շրջապատուած՝ կը յառաջանայ յամրաքայլ դէպի եկեղեցի. կը հնչեն Հրաշափառ շարականին յաղթական ջեշտերը, որոնք այսօր նոր խորհուրդ մը դարձած են սիրոյ, խանդավառութեան եւ հաւատքի միանգամայն:

Օրհնեալ եկեալ յանուն Տեառն:

Վենետիկ քաղաքին մեծ տօնը (Ապրիլ 25, յիշատակ Ս. Մարկոսի), եւ Մխիթար Աբրահայր մահուան տարեդարձը (Ապրիլ 27) ստեղծեր էին այս անշուշտ առիթը: Ու Վենետիկ ամբողջ եւ անոր ծոցին մէջ հանգչող փոքրիկ Հայաստանը հպարտ էին աւտով: Արդէն իսկ երկու օրէ ի վեր տեղական լրագիրները կու տային մեծ աւետիսը:

ՎՍԵՄ. ԳԵՐԵՐՋ. ՀՈԳԵԻՈՐ ՏԷՐԸ

ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՅ՝ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ

ԵՒ ԿԸ ՔԱՐՈՋԷ Ս. ՄԱՐԿՈՍԻ ԲԵՄԷՆ

Վենետիկի Պատրիարք՝ Ծիր. Ռոնքալի իր ազնիւ հրաւերով, Վաթ. Գերերջ. Ծիր. Աղաճանեան, իր հասնելուն յաջորդ առաւօտն իսկ, Ապրիլ 25ին, պաշտօնապէս կը մասնակցէր Ս. Մարկոսի մէջ տեղի ունեցած եկեղեցական արարողութեանց: Հայ Հայրապետին շուրջ մենք ալ բոլորս, հայկական նուիրական տարազներով, մեր բնիկ աւանդութիւններով ուրախութեամբ կը ներկայանայինք, զըւարդներ, սարկաւազներ, վարդապետներ. Ուխտիա Ընդհ. Աբրահայրը Գերպոյ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան եւ Գերջ. Հ. Կարապետ Թ. Ծ. Վ. Ամատունի՝ Առաջնորդ Փրանսայի հայ կաթողիկէ համայնքին՝ կը յառաջանային եպիսկոպոսական զգեստաւորումով. գեղեցիկ շքախումբ մը կազմած էինք մեծ թափօրին մէջ, Ս. Մարկոսի հրապարակին վրայ: Ելլէր Խորենացին իր խոր գերեզմանէն ու տեսնէր իր փոքրիկ ածուին այս խայտառղէտ ու սիրուն ծաղիկները՝ եւրոպական ոստաններէն մէկուն հրապարակին վրայ, այսպէս ի պատուի:

Ս. Պատարագի ընթացքին, զոր կը մատուցանէր քաղաքին Ամենապատիւ Ծիրանաւորը, Աւետարանի ընթերցումէն վերջ, մեր Գերերջ. Հոգեւոր Տէրը հրաւիրուեցաւ ամպիոն, քարոզելու բազմահազար ժողովուրդին: Ու քարոզեց նախ իտալերէն, ապա յարեց Փրանսերէն հակիրճ յորդորակ մը, հուսկ քանի մը խօսք ալ թրթռացուց մեր պաշտելի Մեծաքանչիւ. առաջին անգամն էր որ հայերէն բարբառը կը բարձրանար այդ ամպիոնէն, այդքան քաղցր ու ներդաշնակ, իբրեւ արեւելքէն եկած խունկ մը նուիրական. դիւթուած էին ամէնքը. ոգեւորու-

թեան սարսուռ մը անշուշտ անցաւ այն ածիւններուն մէջէն ալ, որոնք թէեւ անծանօթ, բայց իրենց յիշատակը անմաշ թողած են Ս. Մարկոսի տաճարին պորփիւրէ սիւներու կողերն ի վեր. հայ անուններ՝ որոնք դարերէ ի վեր կը համբուրեն այդ սուրբ քարերը:

Կը խօսի Հոգեւոր Տէրը.

ՇՆՈՐ ՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՂՋԵՐ

Արտասովոր հանդիպում մըն է որ տեղի կ'ունենայ այս հռչակաւոր տաճարին մէջ, մեր երկնային պաշտպանին՝ Ս. Մարկոսի տօնին առթիւ. հանդիպում մը՝ Վենետիկի համբաւաւոր Պատրիարքական եկեղեցիին, ճախագահութեամբ իր Ամենապատիւ Պատրիարքին Ծիր. Ռոնքալիի, Արեւելի մէկ խոնարհ Հովիւին հետ:

Հանդիպում մը, ազնուօրէն պատրաստուած մեր պատկառելի Հովիւէն, որուն կ'ուղղեմ սրտագին ու եղբայրական շնորհակալութիւնս, այն ուրախութեամբ եւ այն պատիւին համար՝ զոր կը պատմաւոր ինձի այս մերկայութիւնը եւ մասնակցութիւնը մեր պաշտպան սուրբին տօնակատարութեանց:

Հանդիպում մը, շատ աւելի հաճելի, որովհետեւ կու տայ միաժամանակ ինձի պատեհութիւնը՝ յարգանքի արտայայտութիւն մըն ալ մերկայացընելու մեր Գերերջ. Հովուապետին, որ սուրբ հատիկն ի սպաս վարած իր գանգաւ պաշտօններուն ընթացքին, արեւելի եւ արեւմուտի մէջ, յատուկ սէր մը ցոյց տուած է հայ ժողովուրդի գաւակներուն հանդէպ, որոնք հալածական եւ նըժգեհ, իրենց անխախտ հաւատքին համար՝ հանդէպ Քրիստոսի սուրբ անունին եւ հայրենիքին, Վաթ. Ծիր. Ռոնքալիի հայրական սրտին մէջ գտած են մեծ ընդունելութիւն, մինչ ան կը գտնուէր իբրեւ առաքելական փոխանորդ՝ Թուրքիոյ, Պուլկարիոյ եւ Յունաստանի մէջ, կամ իբրեւ առաքելական նուիրակ՝ Ֆրանսայի մէջ:

Վսեմափայլ Տէր, մեր սրտագին շնորհակալութիւնը, յանուն բոլոր հայութեան:

ՍՈՒՐԲ ՊԻՈՍ Ժ. ՊԱՊԻՆ ՅԻՇԱՏԱԿԸ

Բայց այս հանդիպումը եւ իմ այս ներկայութիւնը աւելի եւս հանելի է ինծի համար եւ անշնչելի պիտի մնայ իմ սրտիս մէջ, իմ յիշողութեանս մէջ, որովհետեւ այսօր իմ սրտիս մէջ բաղձալի ուխտը կ'իրականանայ. ուխտագնացութիւն մըն է որ կը կատարեմ ձեր մեծ սուրբ Պատրիարքին, Սուրբ Պիոս Տասներորդին, որ նուիրագործած է այս տաճարը, այս Պատրիարքութիւնը բոլոր, բովանդակ վեցնիկը, այն առաքելական եռանդով, գոհողութեան եւ նուիրումի այն կեանքով, պատրաստուելով ելլելու Քաղաքացայտութեան գերագոյն կատարը, զոր ինքն կը կոչէր իր Գողգոթան:

Սուրբ Պիոս Տասներորդը իմ մանկութեանս Պապն է. ուրք տարի ունեցած եմ այն մեծ մեծաշնորհը՝ ստանալու իր օրհնութիւնը, իր հայրական նայածքը իջած է իմ վրայ, իր օրհնութիւննաբաշխ Աջը հանգչած է իմ գլխուս վրայ. իր դէմքը, իր խօսքերը, իր ուղեբճները՝ ուղղուած Հաւատաստիւնի Քաղաքացայտական վարժարանի աշակերտներուն, ընդ միշտ դրոշմուած են իմ սրտիս մէջ: Ու գոհութիւն կը մատուցանեմ Աստուծոյ, որ ահա կարող եմ քանի մը վայրկեան ապրիլ ու աղօթել ձեզի հետ, այս տաճարին մէջ, ուր ինք այնքան աղօթած է, որպէսզի վեցնիկը մնայ միշտ հաւատարիմ իր փառապանծ անցեալին, իր նուիրական աւանդութիւններուն եւ յաբուսին՝ Կաթողիկէ սուրբ հաւատքին:

ՀԱՅ-ՎԵՆԵՏԸ ԵՒ ՄԻԹՐԱՐԵԱՆՆԵՐԸ

Այս հանդիպումը, սիրելի հաւատացեալներ, ինծի կը քոյլատրէ աւելցնել խօսք մըն ալ, յայտնելով բովանդակ եկեղեցւոյ դիմաց այն սէրն ու համակրանքը զոր կը տածեն վեցնիկի հանդէպ բոլոր հայ սրտերը: Հասարակացտութեան փառապանծ օրերէն ի վեր, իբրեւ աշխարհակալ ծովերու՝ դէպի արեւելք, հայերը միշտ ալ մտերիմ յարաբերութիւն մշակած են ձեր այս համբաւաւոր քաղաքին հետ, եւ միշտ բարեկամական. բայց մանաւանդ 1894 դարու սկիզբէն, երբ մեծ Միտրաքար Աբբան, Մառաշ Աստուծոյ, գտաւ այս չքմաղ վեցնիկին մէջ ապաստանարան մը իր հաւատքին, հաւատքին իր Հայրերուն, հաւատքին Տիեզերական եկեղեցւոյ, այդ օրէն ի վեր կ'ըսեմ, որ եւ գտաւ այն օրհնեալ կղզեակին մէջ բոյն մը եւ վատարան մը, անմար պահելու համար այն նոյն սուրբ հաւատքը՝ հայ ժողովուրդին մէջ, եւ վերածնելու համար մշակոյթը, պատմութիւնը,

յեզուն այդ հնադարեան ժողովուրդին, այն օրէն ի վեր վեցնիկ, Սուրբ Ղազար, այլեւս չնկատուեցաւ լոկ ապաստանարան մը, այլ անկիւն մը Հայ հայրենիքին, այն հեռաւոր հայրենիքին, որ միշտ պաշտպանն ու անխնայ եղած էր Քրիստոնէական հաւատքին, ինչպէս նաեւ խղիւի եւ հաւատքի ազատութեան արդար եւ անբռնաբարելի իրաւունքին: Ու վեցնիկ գրաւած է իր տեղը ամէն հայու սրտին մէջ. վեցնիկի անունը միշտ հայաբարեւամբ եւ ուրախութեամբ կը հնչէ հայ շրջաններուն վրայ, որոնք կը բարախեն կրօնքի եւ հայրենիքի նուիրական գաղափարականով:

Վսեմափայլ Տէր, խորապէս երախտապարտ եմ, այս ազնիւ հրաւերին համար, զոր ինծի ուղղեցիք այսպիսի հանդիսաւոր առիթի մը, տալով ինծի պատենութիւնը յայտնելու այս գագուտները, որոնք բոյն դրած են բոլոր Միտրաքար վարդապետներուն մէջ, սկսած իրենց Ընդհանուր Աբբա-հօրմէն. բոլոր երիտասարդութեան մէջ որ հոս կ'անի այն նոյն նուիրական գաղափարականով, ըլլալու համար օր մը առաքելները մեր ժողովուրդին մէջ, տանելով իրենց հետ յիշատակը լաւագոյն տարիներուն՝ զոր անցուցած են այս ժողովուրդն ու չքմաղ լեակի ափերուն վրայ:

Ս. ՄԱՐԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Բայց իբրեւ Հովիւ մը սուրբ եկեղեցւոյ, իբրեւ խոնարհ Հովիւ մը, ես չեմ կրնար աւարտել իմ այս պարզ ու սրտազեղ խօսքս, առանց հրաւիրելու զձեզ, սիրելի հաւատացեալներ, ձեր սուրբ Պաշտպանին աւանդած վարդապետութեան, եւ անոր ուսուցումին. պիտի ուզէի որ այս հանդիպումին յիշատակը դրոշմուէր ձեր սրտերուն մէջ, վերստին յեղեղելով Ս. Մարկոսի Աւետարանին առաջին նախադասութիւնը: Արդարեւ, տարակոյս չկայ, որ Ս. Մարկոսի մեծագոյն փառքն է Ս. Պետրոսի՝ Առաքելապետին աշակերտած ըլլալը, իր փառքն է գրած ըլլալը Հոս Աւետարաններէն մէկը, Աւետարանը որ կը կրէ իր անունը: Այս Աւետարանը, սիրելի հաւատացեալներ, ունի այս առաջին նախադասութիւնը, որ կեդրոնական ոգին է որուն կ'ենթարկուի բոլոր մնացածը: Կ'ըսէ Ս. Մարկոս. Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի աստուածութիւնը, սիրելի հաւատացեալներ, ահա մեկնակէտն ու նպատակը որուն ուղղուած է Ս. Մարկոսի Աւետարանը բո-



—>> Դիմացի նկարին մէջ, ձախ կողմը, վերէն վար — Գեղեթը. Հոգ. Տէրը կը մտնէ Ս. Ղազար — Ս. Մարկոսի հրապարակէն վրայ, Թափօրի պահուն — Ս. Ռաֆայէլեանի աշակերտներուն հետ — վաճառի աշակերտներուն հետ:

Աջ կողմը, վերէն վար — Մուտք ի Ս. Ղազար — վաճառի պարտէզին մէջ՝ Միտր. Հայրերու եւ ազգայիններու հետ — Նահատակաց հանդէսի պահուն — մեկնում:

լոր: Քրիստոսի աստուածութիւնը, որուն կենդանի ու եռանդուն հաւատարմութիւնը եղաւ նախ իր վարդապետը՝ Ս. Պետրոս. եւ Ս. Պետրոս մշտապէս կենդանի իր յաջորդներուն մէջ, իբրեւ անխախտ Ուսուցիչ, Հոռմի Գահին վրայ: Ահա յիշատակը գոր կ'ուզեմ բողոքել ձեզի, սիրելի հաւատացեալներ: Նորոգել այսօր, ձեր պաշտպանին տօնին օրով, ձեր հաւատքը ամբողջական, նորոգել ձեր յարումը, անվերապահ յարումը այս մեծ նշմարտութեան, Քրիստոսի աստուածութեան, բոլոր իր պարտադրական հետեւանքներով, բոլոր իր անխախտ անվերապահ հետեւանքներով, գոր իր հետ կը բերէ այս հաւատքը: Պարտադրական հետեւանքներ, բայց հետեւանքներ որոնք հիմը կը կազմեն ամէն անհատական, ընտանեկան, ընկերական եւ համայնական վերաբերման: Քրիստոսի աստուածութիւնը, որ կը տարածուի, որ կը շարունակուի իր խորհրդական Մարմին մէջ՝ որ է եկեղեցին: Եկեղեցին՝ անձնաւորութեամբ Հոռմի Սրբոյ. Քահանայապետին մէջ, իբրեւ ի Պետրոս՝ անմահ իր յաջորդներուն մէջ: Վերանորոգ հաւատք՝ Սուրբ եկեղեցւոյ ալ աստուածայնութեան, որուն կը գերազանէ Քրիստոսի փոխանորդը: Լաւագոյն ընծան է գոր այսօր կրնաք դուք բերել ձեր պաշտպանին, եւ է միաժամանակ մեծագոյն ընծան գոր այսօր կրնաք ստանալ. այս վերանորոգումը ձեր հաւատքին ի Քրիստոս եւ յեկեղեցի:

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐՈՒ ՀԱՒԱՏՔԸ

Արեւելեան եկեղեցւոյ մեծ Հայրապետներէն մէկը, Ս. Յովնան Ոսկեբերան, իր օրով կ'ըսէր իր հաւատացեալներուն. «Մի՛ հեռանաք Ս. եկեղեցիէն, վաճառե՛ք եկեղեցիէն աւելի հոգը բան չըկայ: Եկեղեցին է իմ յայտը եւ կը յարէ Ս. Յովնան Ոսկեբերան - եկեղեցին է ապաստանարանը եւ, եկեղեցին է փրկութիւնը եւ: Երկնքէն բարձր է, աշխարհէն աւելի ընդարձակ է եկեղեցին»:

Այս է յիշատակը գոր կը բողոքել ձեզի. սիրելի եկեղեցիներ. մասնաւորապէս կը յանձնարարեմ այս իտալացի ժողովուրդին, որ ունի այն գերագոյն առանձնաշնորհը ըլլալու բնական պահապան այս հաւատքին, որ միակ գրաւականն է յաւիտեանական կեանքի եւ անմահութեան: Յարում եկեղեցիին, յարում Սրբազան Քահանայապետին, Պետրոսի Գահուն. ահա մեծագոյն նուէրը գոր կրնաք ձեռնել այսօր այս հանդիսաւոր ժամուն, ձեր երկնային պաշտպանին:

Ու կ'աւարտեմ ուրիշ մէկ խօսքով եկեղեցւոյ մէկ ուրիշ Հայրապետի մը, այս անգամ Արեւմտեացի, Ս. Օգոստինոսի, որ օր մը այսպէս կ'ըսէր իր խորհրդածութիւնները. «Մի՛

բնեք մեր Տէր Աստուածը իբրեւ մեր Հայրը, սիրե՛ք նաեւ եկեղեցին իբրեւ մեր մայրը»:

ՅՐԱՆՍԵՐԷՆ ՅՈՐԴՈՐԱԿ

Վենետիկի Պատրիարքական տաճարին մէջ տեղի ունեցած այս հանդիսաւոր տօնախմբութեան առթիւ, հաւաքուած ենք հոս արեւելէն եւ արեւմուտէն, սիրոյ անհալ գօղով մը միացած: Շատ ժամանակ է Վեր, բայց մանաւանդ մեր օրերուն աւելի կը խօսուի արեւմուտի եւ արեւելի մէջ գոյանալիս հասկացողութեան մը մասին. այս միութիւնը ամէն ժամանակ տեղի կրնայ ունենալ մի միայն կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, որ յարգելով հանդերձ իւրաքանչիւր ազգի մասնաշատակ առաւելութիւնները, բնիկ սովորութիւնները, մշակութային յառաջդիմութիւնները, կը միացնէ բոլորը աստուածային սիրոյ եւ միութեան մը մէջ, ոչ միայն միջազգային, այլ պիտի ըսեմ՝ գերազգային, գերբնական միութեան մը մէջ:

Ահա այս մեծ շնորհքն է որ ես այսօր կը խնդրեմ Ս. Մարկոսի բարեխօսութեամբ. որ ձեր յարումը կաթողիկէ եկեղեցւոյն ըլլալ միշտ աւելի ապրում, միշտ աւելի կենդանի. մինչ ձեզ կը հրաւիրեմ երգելու եռանդով Հաւատամքին մէջ, խմբերգին հետ. եւ ի մի միայն սուրբ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐԲԱՌՈՎ

Իմ խօսքերս դուք հասկցած պիտի ըլլաք, ըլլա՛յ իտալեան, ըլլա՛յ ֆրանսեան. բայց մեզի գոհացում տալու համար՝ որպէսզի տեսնէք թէ սուրբ եկեղեցւոյ մէջ ազգերը խորութիւն չեն բերեր, ազգերը բոլոր սիրելի գաւակներն են, եւ մանաւանդ հայ ազգը՝ որ ունի իբրեւ իր մեծագոյն պարծանքներէն մէկը՝ եղած ըլլալը առաջինը որ ընդգրկած է Քրիստոսի սուրբ հաւատքը իբրեւ ազգ, մէկ երկու խօսք ալ ձեզի կ'ուղղեմ:

Ու նախ կ'ողջունեմ ձեզ հայրական սիրով. առնեմ որ Վենետիկ եմ, տարակոյս չկայ որ բախտաւոր եմ ունենալով իրենց Ս. Ղազարի փարիլի վանքը, հայրենիքի մէկ կտոր մըն է, ուր մշտամիմունջ ազօրքը կը բարձրանայ ամենամոխրական աւանդութիւններուն համաձայն մեր սիրելի եկեղեցւոյ:

Ողջոյնս սիրոյ, ողջոյնս յարգանքի՝ որպէսզի մենք ալ հայերս, ուր որ գտնուիմք, միշտ արժանաւոր գաւակներ մեր վարդապետ, անոնց սերունդն ըլլանք, որոնք սուրբ եղիշէի բերնով, գերիշով մեզի աւանդած են՝ թէ մենք ունինք իբրեւ մեր Հայրը՝ Ս. Աւետարանը, եւ իբրեւ մայր ունինք կաթողիկէ Սուրբ եկեղեցին:

ՎԱՍԵՄ. ԳԵՐԵՐԶ. ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐԸ

Մ Ո Ւ Ր Ա Տ - Ռ Ա Փ Ա Յ Է Լ Ե Ա Ն Ի Մ Է Ջ

(Ա Պ Ր Ի Լ 25)

Գերերջ. Հոգեւոր Տիրոջ այցելութեան օրերուն կը զուգադիպէր նաեւ մեր ապրիլեան սուրբ նահատակներուն յիշատակը: Այսօր ազգային սգաօն կը կատարուի Մուրատ-Ռաֆայէլի յարկին տակ. կը նախագահէ Հայոց Միաբանաւոր Պատրիարքը. ներկայ է ամբողջ Միաբանութիւնը, բազմաթիւ ազգայիններ:

Մահերգով եւ տխուր նուագներ, Ծովիէնի թաղմանական քայլերգը, Գրիգոր Սիւնիի «Վուշ Վուշ Վշտին» թախծալից խմբերգը՝ բոլորովին ուրիշ աշխարհ մը փոխադրեցին մեզ, աշխարհ մը ցաւի, արտասուքի, տառապանքի, հեծեծանքի... Արտասանութիւններ, արձակ գրութիւններ, իմաստալից եւ սպաւորիչ, կատարուած Մուրատ - Ռաֆայէլեան Վարժարանի բարձրագոյն դասու աշակերտութեան կողմէ՝ բերին մեզի հռոյտ-չանքներ հեռաւոր ու արիւնոտ անապատներէն, տառապանքի անյայտ ճամբաներէն, ուրիշ քայլեր են մեր նահատակ նախնիք, մարտիրոսական դասերէն:

Օրուան բանախօսը, վարժարանին տեւող՝ Հ. Եղիա Վրդ. Փէլիկեան, ամէնուս սրտին մէջ քանդակեց ահաւոր պատկերը հայկական կարմիր Զատիկին, արիւնոտ Գողգոթային. իր ձայնին մէջ լսեցինք մատղաշ եւ ամբիժ կոյսերու, խող-խողուած կոյսերու ամբողջ ողբերգը մահասարսուռ. բայց նաեւ յուսատու երգը անոնց աննման յաղթանակին, որով սգաօնը դարձաւ ոչ թէ լացի եւ ողբի տօն, այլ յաղթանակի, յուսալիւ ու փառապանծ յաղթանակի, որու մեծ բազինին վրայ կը փառարանուին յաւերժօրէն մեծ հերոսները մեր մեծ ազգին: Որովհետեւ,

որքան հոգին բարձր է նիւթէն, շեշտեց յարգելի բանախօսը, նոյնքան այս նահատակ ցեղը՝ իր ջարդարարներէն. որովհետեւ անոնք մեռան բարձր գաղափարի մը համար, եւ այդ գաղափարը կրօնք է, Աստուած է, հայրենիք է: Եղբայրակեց իր խօսքերը նահատակներու սուրբ կտակը աւանդելով բոլոր ներկաներուն. կտակ մը որ կու գար անծանօթ լեռներէ, դան-խուլ անապատներէ, այն գերեզմաններէն որ չկան՝ բայց կը խօսին յաւիտեան:

Հանդէսին վերջաւորութեան, որոտընդոտ ծափերու մէջ բեմ բարձրացաւ Վրդ. Գերերջ. Հոգեւոր Տէրը: Իր խօսքերը իբրեւ պատգամ, գրեց մեր ներկայ թիւին առաջին էջին վրայ: Իսկապէս անմոռանալի, անջնջելի խօսքեր, որոնք գերազանցօրէն ոգեւորեցին բոլորս. պիտի չմոռնանք մանաւանդ այն հանդիսաւոր երգումը գոր կատարեցինք միասին. «Եթէ երբեք դաժան թշնամիներ յարձակին այս նուիրական գաղափարներուն դէմ, որոնք հայութեան փառքն ու պարծանքն են, Աստուծոյ Քրիստոսի սիրոյն եւ մեր ազգին յարումին, մենք պատրաստ ենք դարձաւ արիւնոտելու, բայց ոչ դաւաճանելու»:

Հանդէսէն վերջ՝ հիւրերը եկան յարգանքի ցոյցերով համբուրելու Հոգեւոր Տիրոջ Ս. Աջը. Մուրատ-Ռաֆայէլեանի աշակերտները բախտն ունեցան նաեւ խօսելու իր հետ, լսելու իր հայրական ու քաջալերական յորդորները:

Արցունքով բաժնուցանեց այդ նուիրական յարկէն, հայկական նոր խանդ, նոր աւելն մեր սրտերուն մէջ: